ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՅՈՒՅԱՍԱՐԱՀՆԵՐՈՒՄ

ՀԻՄՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐՈՒ

Հանրապետության վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի համար ստեղծագործական որոնումների շրջանը արդեն անցյալ է դարձել: Այսօր նա իր հաստատուն տեղն է գտել արվեստի մեջ որպես ինքնատիպ ստեղծագործող: Վստահությամբ կարելի է ասել, որ գեղանկարիչը հասել է ոճի այն լիավարտ հաջողականությանը, դեպի որը գիտակցաբար և ինքնաբերաբար ընթացել է իր ամբողջ ստեղծագործական ճանապարհով:

Խաչատրյանի գրաֆիկական աշխատանքներին ծանոթանալու հրճատավորություն ընձեռեց դեռևս 1980 թվականին նկարիչների միությունում բացված ցուցահանդեսը: Այժմ՝ երեք տարի հետո, մենք վերստին հնարավորություն ունենք հանդիպելու նրա գործերին: Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանում բացված լկասի տեխնիկայով նկարված գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը ակնբախորեն համոզում է, թե որքան է ակտիվացել նրկարչի ստեղծագործական դիրքորոշումը, առնականացել, ամրապնդվել և հղկվել նրա վարպետությունը:

Լկասի գեղանկարչությունը գոյություն ունի վաղուց: Բայց Խաչատրյանը լկասը հայտնաբերեց նոր որակով, այն կիրառելով ուրվանկարի համար և դրանով ընդլայնելով գրաֆիկայի ավանդական հասկացությունը: Լկասի գեղարվեստական, հուզական հնարավորությունները անսահման են: Նրա փայլատ, տամ և թափանցիկ ֆակտուրան, լուսաբեր տարերքը ներծծում են սեպիաներկը և սանգինան, որոնցով աշխատում է նրկարիչը, կենդանության պատրանք հաղորդելով նկարագծերին: Անբասիր և վարպետությամբ ստեղծված ուրվանկարը լկասի գուգորդությամբ ավելի տպավորիչ է լինում:

Խաչատրյանի ստեղծագործական հավատամքը մնում է անփոփոխ: Առաջվա պես նրա ուշադրության կենտրոնում Մարդն է, և առաջվա պես նրան բնորոշ է ռացիոնալ դասական սկզբունքով գործելու, հստակ, պարզորոշ, տրամաբանական, բացարձակապես լիավարտ ստեղծագործություններ արարելու ձգտումը: Նրա կոմպոզիցիաներում ավելորդ, կեղծ տպավորիչ, ուրվանկարի դասական խստությունը և զսպվածությունը խախտող ոչ մի բան չկա: Այդպես ամեն ինչ կառուցվում է հատակորեն, կենսական հիմքի վրա և վաղօրոք որոշված շեշտադրությամբ, որը դրսևորվում է բնօրինակն ընտրելիս: Նկարիչը միշտ նկարում է բնօրինակից, բայց չի հանգեցնում տեսածի մեխանիկական վերարտադրությանը: Թեև նա ամենայն մանրամասնությամբ է նրկարում առանձին դետալներ, սակայն նրա կոմպոզիցիաները ըստեղծագործական տառապանքի հետևն անգամ չեն կրում: Այնքան որ նրբագեղ ու փայլուն արտիստականությամբ են արարված դրանք:

Ցուցահանդեսն են ներկայացված «Հայաստան» երկաշարից մի շարք կոմպոզիցիաներ, դիմանկարներ, նատյուրմորտեր:

Որպես դիմանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանը վաղ է հասել բարձր վարպետության: Այս ժանրում արվեստագետը հմտզությամբ տպացուցում է, որ հմտորեն է տիրապետում ռեալիստական վարպետության գաղտնիքներին: Միևնույն ժամանակ, նրա կերպարային մեկնաբանությունները նորովի են, համամնչուն ժամանակին:

Խաչատրյանի դիմանկարները արտաքուստ հիշեցնում են վերածնության շրջանի ստեղծագործությունները: Արվեստագետը չի էլ թաքցնում իր նվիրվածությունը ռենեսանսի շրջանի արվեստին: Մեկնարկ վերցնելով դրանից, նա միասնական սյուիտ է ստեղծում ժամանակակից մարդկանց. նրանց ներաշխարհի մասին: Ցուցահանդես ներկայացված գրեթե բոլոր դիմանկարներում ճանաչում ենք մեր ժամանակակիցներին: Դրանք Հ. Իզիբյանի, Վ. Մարյանի, Է. Ռյազանովի և այլոց դիմանկարներն են: Երբ դիտում ես Ռ. Խաչատրյանի ստեղծած դիմանկարները, ակամա հիշում ես Ա. Պ. Չեխովի ասածը. «Մարդու մեջ պետք է ամեն ինչ գեղեցիկ լինի...»:

Ուշագրավ է նրա կերտած դիմանկարների կոմպոզիցիոն կառուցվածքը: Սովորաբար որպես ֆոն է ծառայում մահուր թաղքը կամ լկասը: Նկարիչը հրաժարվում է ավելորդ մանրամասնությունների պատկերումից, դիտողի ուշադրությունը կենտրոնացնելով իր մոդելին, բացահայտելով այն ներսից, փոքրակալի հոգևոր աշխարհի հաշվին: Նա մեծ նշանակություն է տալիս իր հերոսների հանդերձանքին: Հագուստը նա ի սպաս դնում է բնավորության գծերի, տրամադրության բացահայտմանը: Իր մոդելները պատկերելով հին տարազներով, ծոպերիզ շալմաներով, նկարիչը դրանով իսկ նրանց շրջապատում է ռոմանտիկության լուսապսակով:

Նրա նկարները, իհարկե, զերծ չեն որոշ չափի գեղամոլությունից, բայց յուրաքանչյուր կոմպոզիցիայի մեջ արտահին գեղեցկության ետևում հոգեբանական բարդ վերլուծություն է բովանդակվում:

Քնքուշ հնարականությամբ և առանձնահատուկ ոգեշունչ գեղեցկությամբ են համակված Խաչատրյանի կանանց դիմանկարները: Դրա մեջ մարմնացում են գտել նկարչի վերաբերմունքը կնոջ նրկատմամբ, նրա խոր ակնածանքը գեղեցկության հանդեպ: Ուզում եմ հատկապես կանգ առնել «Կիսադեմի» վրա: Այդ դիմանկարը զարմացնում է ձևերի իր դասական խստությամբ ու նրբագեղությամբ:

Բոլորովին այլ տրամադրություն է բովանդակում նկարչուհի Իննա Օլեկսայայի դիմանկարը: Նրանում ամեն ինչ, թե՛ անհամար ծոփերով զարդարված լայն հագուստը, թե՛ կեցվածքը և թե՛ ձեռքերի դրվածքը ծառայում են ներքին տրամադրության, բնավորության բացահայտմանը: Բայց ամենից առաջ, իհարկե, դեմքը: Սեղմված շուրթեր, բարձրացված հոնքերի նուրբ թեթևագծերով երիզված աչքերի հաստատակամ արտահայտություն՝ ամեն ինչ պատմում է ամբողջական և կամային խառնվածքի մասին: Ուշագրավ է նկարչի ինքնանկարների շարքը:

Խաչատրյանի ինչպես դիմանկարներում, այնպես էլ նատյուրմորտերում իշխում է գեղեցկության բանաստեղծական փիլիսոփայությունը: Գեղեցիկ է ոչ միայն մարդը, գեղեցիկ են նրան շրջապատող առարկաները, որոնք կոմպոզիցիաների մեջ հանդես են գալիս որպես մարդկանց պատկերավոր նմանակներ: Առարկաները՝ լինի դա ինքնաեռ, թեյնիկ, թե սափոր, դադարում են պարզապես առարկաներ լինելուց: Դրանք ապրում են իրենց ուրույն կյանքով, ստանալով մեծ նշանակություն: Իրենց կոմպոզիցիոն կառուցվածքով դասական են «երեք ձկներ», «Նատյուրմորտ ինքնաեռով» աշխատանքները, որոնք աչքի են ընկնում ներքին զսպվածությամբ և ծայր աստիճան հակիրճությամբ: Ռուդոլֆ Խաչատրյանի ամբողջ ստեղծագործությունը հիմնված է խորապես համոզված մարդկայնության վրա:

Մ. ԽԱՉՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— Ցուցահանդեսի աշխատանքներից՝
Լուսանկարները՝
Լ. ՍԱՐԳՍՅԱՆԻ